

կարդացեր էր ուրեք, չէ կարելի մեր-  
ժել թէպէտ և միւս մեղի ծանօթ պատ-  
մագիրը լուած ևս լինին. որովհետեւ յոյն  
պատմագրաց այդ լուութիւնը կարելի  
է թէ հայրենամիրտկան և անձնասի-  
րութեան զգացմանց հետևանքը ըլլայ.  
ուստի անտի բացառական փաստ մի  
յառաջ բերելն տրամարանական չէ.  
ինչպէս նաև զլլովիսէս անօխալ համա-  
րելն : Սակայն անուղղակի Ամիրանոս  
իսկ և Ռատովնաըն կը թուին հաստա-  
տել, բայց ամենէն աւելի այն ժամա-  
նակի հանգամանքներն : Արդ, իիւթա-  
նիոյ մասին թէպէտն պատմիք լուու-  
թիւն կը պահեն, բայց ամէնքն իսկ կը  
պատմեն Գթաց, Սարմատացոց և Աս-  
րակինոսաց աշխաւանքներն, որոց մի  
մասն Շապէւոյ կողմը բռնելով, արշաւե-  
ցին արեելեան կայսրութեան խորերը :

Երկրորդ կոստանդիսսի և Յուլիանոսի  
շարաշար պարտութեամբը՝ Պարսիկը  
կարող էին արշաւել մինչև 'ի Բիւթա-  
նիա . գուցէ այս իրողութեանս իրեւ ա-  
պացոյց ըլլայ Յովիանոսի լեզապատառ  
փութալն 'ի գային, հնդամիւ գա-  
ւառաց կրտսեամբ : Սակայն ենթա-  
գրելով թէ այս դէպքն իսկ իրօք պա-  
տահած շինէր, անոի այս հետևու-  
թիւնս միայն յառաջ կու գար, այս ինքն  
է, Մ. Խորենացի կարէ սխալած ըլլալ,  
բայց ոչ երբեք դադարել 'ի լինելց հեղի-  
նակ Հայոց պատմութեան, Ուստի այս  
իրողութեանս մանր քննութեանն հետ  
նաև մեր գատն յանձնելով ուսումնա-  
մէր ընթերցողաց, կը կնքենք մեր յօ-  
դուածն 'ի ծառայութիւն Հայոց պատ-  
մագրաւթեան :

Հ. Բարսեղ Սարգսոս

## ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

### ԱՐՏԻՐԱԾԱՑՐՆ ՀԱՅՈՑ Ի ԿԱՄԵՆԻՑ ՓՈՏՈԼԵԱՆ

(ՏԵ՛Ս Համու ԽԴ, Էջ 21, 97, 193)

## Ը

### ԱՐԿԱՆՔ ԱԿՈԲՍՈՑ ԿԱՄԵՆԻՑ ՀԱՅԱՋԳԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԻՒՆ

1672ին Մէհմէտ դ. կամենիցի ափ-  
բելով, երբ քրիստոնեայ բնակիչք կը  
թողուն, կը հեռանան քաղաքէն, այլ-  
ազդիք մեծամեծ խոստմնէնքներ անե-  
լով կ'առնուն կը մնան զչայս . սակայն  
600 հոգի, 'ի թիւս որոց և 14 կուսանք,   
կը հեռանան 'ի կամենիցէ . Սոց հետ  
կար տասուերկու տարեկան մանսուկ  
մի, որդի կամենիցցի Հայու, որ քիչ  
ժամանակէ 'ի վեր որբ և անտէր մնա-

ել էր . Մայրը վազուց մեռած էր,  
իսկ հայրը դեռ նոր՝ կամենիցի առման  
միջոց՝ իւր տունը հրդեհէն աղատելու  
աշխատելով բոցոյն ճարակ եղել էր :  
Այս փոքր երախայն (որովհետև հայ-  
ը միշտ յարաբերութիւններ ունեցել  
էր թաթարաց հետ), համարձակ կը  
խօսէր թաթարաց, նոյն և թրքաց լե-  
զուով. այդ լեզուաց գիտութիւնը՝ վեր-  
ջերը՝ մանկան մեծ թարգմանի պաշ-

նակէ պյսպիսի ինչ. քանզի առիւն հզօր է 'ի  
գաղանս, այնպէս և պարսկականն 'ի (Թագա-

ւորս . և մատեան ժողովիչ և իմաստութեան,  
որպէս հռովմայեցոց աէրութիւնն »:

տօնի հասնելու պատճառ եղաւ : Գաղթականացն խուռն բազմութեան մէջ, մի միակ մերձաւոր անձն մի ունէր այս մանուկս, որ էր պառաւեալ կոյսն Հըռիփսիմէ, չորեքտասամն մայրապետաց մին, որ և իրեն մայրագիր եղած էր : Կուսանաց վանկին բեռները կրկին ուղարկուուրած շալակ բեռնաւորած էին, և Ստեփանիկ մանուկն՝ այդ ուղարկն մէկուն վրայ կեծած, որ կապոյներուն և պարկերուն միջն հաղի կ'երիար, և կանանց ճիշն, խուռն բազմութեան կանչն և աղաղակն անտարբեր մտիկ կ'անէր. — ուր և ինչո՞ւ կ'երթան, արգեօք վերստին պիտի դառնայ իր ծնընդեան տեղին, — ամենեին հոգը չէր : Երեակայութեանը մէջ խոր տապաւորած էր միայն կամենիցի հրդեհը, որոյ զոհ եղած էր հայրը, ուր և ինքը յուսահատարար լալուն և ծնելուն միջոց՝ անծանօթ ծերունի ձեռք մի զինքն աղատած էր կրակէն, և տարած յանձնած էր կուսանաց վանկը՝ Հոփիփսիմեայ ինամոց :

Գաղթականաց Հայոց կարաւանն կամ թափօրն կը հասնի Տնեսդր գետին եզերքը. ուստի միւս կողմանցնելու արգելքը կը լինին. զի խոթինի անցքը կամ կամուրջը՝ այլազգի զօրքն դէպ 'ի ամրոց անելու կը գործածէ : Հայոց բանակին գիշերօթելու տեղ կը նշանակուի զառիվայր տափարակ մի, ուր երբեմն Սոպիէսքի լեհաց թագաւորը մեծ յաղթուութիւններ գործել էր : Հայք ստիպուած էին ամէն տեղ այլազգի կառափարչաց ներկայանալ, և նոցահամանին համեմատ յառաջ վարել ճամբանին : Կ'որոշեն իրենց մէջ այս անգամ պատժամաւոր զրկելու առ այլազգի կառափարիչն՝ խուտագովիլ անուով նշանաւոր անձը, որոյ՝ իրեւթարգման՝ կը նշանակին Ստեփանիկ Ակրտայ մանուկը. այս առթիւ նա՝ առաջն անգամ կը վարէ իւր ապագային պաշտօնը : թէպէտ և խոթինի բերդակալը Տէրիփալիթա՝ կը մերժէ Հայոց խնդիրը, սայլը չի տար, այլ տեսնելով Հայոց կամենիցի վաշայէն

առած անցագիրը, կը հրամայէ որ առանց մօտենալու արբունի սայլերուն՝ հեռուէն անցնին երթան : Երկրորդ օրը՝ առաւոտը կանուխ՝ Հայոց բանակը կը շարժի տեղին, և երբ կը հասնին երկրորդ գիշերօթի տեղը, այլազգի խումբը՝ որ աղայի մի հրամանատարութեամբ՝ Հայոց հետ կ'երթար, համաձայն կամենիցի փաշային կարգադրութեան, կը հրաժարի մերոնցմէ . այլ այդ հրաժարականը մեծագին կը լինի մերոց . զի 'ի նշան նոր հակալութեան՝ ոսկոյ մեծ քսակ մի պարզե կու տան աղային : ապա թէ ոչ այդ աղային պաշտպանութիւնն աւելի ծանրագնի կը լինէր նոցա : Հայք իրենք իրենց մնալով՝ ազատ այլազգի պաշտպանէ, համարձակ կը լինին պաշտելու իրենց Տէրամայրը : Գիշերները՝ խուլ և անմարդի ճանապարհէ գուրս տեղուանք կը զարնեն իրենց բանակը. իրենցմէ պահապաններ կը գնեն բանակին շորս պտոյտը . ի բանակամիջին՝ պարսիկ կամբեռուներով հսկանաւորեալ սայլին վրայ է Տէրամօր Հրաշագործ պատկերն, պաշտպան պանդուխտ Հայերուն : Փոխան հրաբորոր ջահներու փոքրիկ կանթեղ մի կը պըլազըլայ Պատկերին զիմաց, ազօտ ըստ ձգելով Տէրամօր ժուկս գէմքին վրայ : Այդ շարժական վրանաձեւ տաճարին մէջ, ամէն օր պաշտպանունք կը կատարուին . թերևս և ոչ մի փառաւոր տաճարի մէջ այնպիսի ջերմանջերմ պաղատանք չեն զիմած հաւատացեալք առ Աստուած, ինչպէս այս աղքատին խորանին գիմաց : Երեկոյեան ժամանացութենէն վերջը վանազուրկ և տիրատեսիլ մայրապետք ծունր դըրած պատկերին առաջ իրենց առանձին մրմունջը կը հեղուին յունկն Տէրամօր . քաղցր էր նոցա համար այն Աստուածամօր առաջ Անկեալ գերքը . Անկանիմք առաջի բոյ Աստուածածին, սրտաճմիկ և խուլ ձայնով կը կրկնէին նոքա . չէր կրնար Հրաշագործ Տէրիփալիթա անլսողն լինել այն սըրտախօսիկ հառաջանաց . միսիթարեալ

կը փակեբն նորա իրենց աչքը՝ ՚ի քուն  
հանգստեան, մինչդեռ նոցա հոգաբարը  
ձուն չեր Մատթէոս, կանթեզին ազօտ  
լուսով՝ ՚ի գիր կ'անցընէր օրուան պա-  
տահարըը: Գիշերուան հանգստենէն  
վերջը, վաղ առաւօտ երկրպագելով  
մեր Հայերն գէպ կատուածամօր պատ-  
կրին կողմը, կը շարունակէին ճամբա-  
նին միշտ՝ ՚ի հարա բռնելով: Այսա  
հետ էր կ Ստեփանիկ թարգմանիչ, որ  
Հոփիսիմեայ օրինակին հետեւով չեր-  
մեռանգութեամբ կը համրուէր գե-  
աինը: Բայց ո՞ր պիտի հանդէր վեր-  
ջապէս սոցա ճանապարհը. «Նա, Տի-  
րամայրը կը ցուցընէ մեզ», կը հառա-  
չէին Հայք, գէպ ՚ի Տիրամօր սայլը աշ-  
քերին վերցընելով:


Ոյս ձեռվ ամիս մի ճանապարհորդե-  
լով՝ կը հասնին յափն ծովու: Արգէն  
գրեցինք նոցա ՚ի ծովու տագնապը, Մա-  
կեդոնիոյ մէջ երկար մնանին և անոտի  
յիլվով անցնենին: Իլվովի մէջ կամե-  
նիցէ ենող կուսանացմէ ոմանիք կը  
բաժնուին յընկերութենէն: Անտոնի  
պատճառ կը բերէ նոցա հայերէն չդիտ.  
Նալը: Այդ բաժնուող կուսանաց մին  
է պառաւն Հոփիսիմէ, մայրազիրն  
Ստեփանի Ակրասոյ: Այսա՝ Հոփիսիմէ  
և Ակրասոյ՝ ընկերութենէն բաժնուելով,  
հարկ էր որ ապրուստի ճամբայ մի  
գտնային, իրենց համար օտար և ան-  
ծանօթ իլվով քաղաքին մէջ: Ստեփա-  
նիկ այն ատեն 16 տարուան էր: Ակը-  
սաւ անելանելի մոտածութեան մէջ ըն-  
կըզմիլ: յիլվով փողոցէ մ'անցնելուն մի-  
ջոց՝ պատահմումք առջիը կ'ենէ կամե-  
նիցի խոցիմիրպէի մականուով մեծա-  
պատիւ հայազգին: սա (խոցիմիրպէի)  
կամենիցի՝ այլազգեաց ձեռքը անմիջա-  
պէս անցնելուն միջոց՝ տեղափոխուած  
էր յիլվով: այս պատահմումք կ'ապա-  
հովէ ինչպէս Ակրասոյի նոյն և Հոփի-  
սիմեայ կեանքը և ապրուստը իլվովի  
մէջ: խոցիմիրպէի կամենիցի ուներ և  
անուանի քաղաքացեաց մին էր, նորա  
փառաւոր տունն էր Հայոց հրապարա-  
կին արևմտեան ծայրը, ուր այժմ լեհաց  
փառաւոր եկեղեցին կանգուն կայ ՚ի

Գուա Ա.

պատիւ Ամենատուրբ երրորդութեան: խոցիմիրպէայ բարօրութեան բան չէր  
պակասել, ըստ արտաքնյոյն այլ որով-  
հեաւ չկայ աշխարհիս վրայ կատա-  
րեալ երջանկութիւն, ուս ևս ունէր իւր  
վիշտը. զի զաւակները չէին ապրել:  
այդոր գարման՝ նա բան չէր խնայած,  
առաս տուրք և ողորմութիւն, ներմ  
աղաշանք պաղատանիք և սուրբ տեղեաց  
ուխաղնացութիւն:

իլվով անցնելուն պէս՝ անմիջապէս կը  
ծնանի նորա կինը՝ Մարգարիտա զըս-  
տրիկը. այլ ինքն ճանապարհին վտան-  
գուած լինելով շուտով կը վախճանի:  
խոցիմիրպէի երկար ժամանակ կ'ող-  
բայ իւր սիրելի ամուսինը, և բոլոր  
իւր սէրը փոքրիկ Մարգարիտայի վրայ  
կեդրոնացընելով՝ երկրորդ ամուսնու-  
թիւն մոքէն չանցըներ:

Նորա անկին տան՝ տանտիկին հար-  
կաւոր էր, բարեղացատօն, զգաստ, միան-  
գամայն հայ, որ առաջնորդ և խնամա-  
կալ լինէր փոքրիկ Մարգարիտային.  
Հոփիսիմէ պառաւն սյդ բանին շատ  
յարմար էր: Ստեփանի ալ հոյր և ա-  
ռաջնորդ կը պակասէր: Խոցիմիրպէի  
սիրով բացաւ իր տան դռները սյդ ան-  
տուն և անինչ պառաւին և պատանե-  
կին զիմաց: Հնորհակալութեամբ մնան  
նորա իրենց նոր բունին մէջ, որով և  
երկու կողմէն մեծապէս գոհ եղան: կը  
գոնան զիրար կամենիցցի Հայ  
պանդուխտները, ՚ի թիւս որոց կ'աւել-  
նայ ապա ե այլ ոմն հայ կամենիցցի:  
Գասպար Բուտագովիչ անուամբ, որ  
ըստ վիշտը Գարենդի՛ նշանաւոր ոմն  
եղած է: Սա երկար ժամանակ ազգոյ-  
նոց հետ ՚ի Մակեդոնիա, ՚ի Պալլէտ անս  
պանդիտսելէն վերջը, միշտ պահապան  
հսկելով Տիրամօր պատկերին, 1682ին  
կու գոյ իլվով, և հոն Ս. Նիկոլայոս  
կոչուած Եղբայրութեան խնամակալի  
պաշտօնը կը սոտանձնէ: Հայոց մէջ սա  
ճանցուած է ճարտարախօս: Լեհաց  
Յոհան Գ. թագաւորը իլվով եկած մի-  
ջոց՝ Գասպար յիլեցուցած է նմա բանա-  
ստելով գոյ գոտովից գալաքտանալը  
յալազգեած անոնի և Բալլայուրը \*



Խոցիմիրաքեայ խաղաղուէտ բնակարանին մէջ կենդանացան հին ազգային և կամենիցեան յիշատակը . բուտագովիչ շատ կը սիրէր նորանոր լուրեր պատմել կամենիցի տիրողաց մասին , թէ նախախնամութիւնը գանազան պատիժներով կը հարուածէ զնոսա , տիրած են քաղաքին մէջ սով , ցաւ , շփոթութիւնք նաև այլ անսովոր երեսիքք : Այդ երկու հայ պանդուխոր գտաւիժ մի մեղրաջուր խմելուն միջոց՝ շատ ու շատ խորհրդագութիւն կ'անէին , թէ ինչպէս , եթէ Աստուած տայ , վերադառնան 'ի կամենից պիտի կարգաւումն ազգիս զործերը , և առանց ինայելու պիտի գուրս վարեն քաղաքէն բուլոր Հրեայքը . նոքա լաւ գիտէին որ որդիկը խորայելի խմայելի իշխանութեան ներքոյ իրենց տեղը բռնած էին կամենիցի մէջ : Խոցիմիրօքի ալ կը յիշէր զուարթախառն մորմնքմամիք իւր կամենիցի մէջ գեղայարմար բնակարանը , շորջ պատեալ կակղի ծառերով , դէպ 'ի փողոց երկնցած ճեմելեզք , ուր երեկոյեան « Հրեշտակ Տեառնի » զանգակին ձայնով կը ժողովէին քաղաքին և զաշտաց պաշտօնավարք , և երկար նստարաններու վրայ հանդշած՝ հանդարտութեամբ կը խօսէին , կը խորհրդագէին հասարակաց գործոց վրայ : Ճեմելեաց մէկ ծայրը բարձրացած էր կամենիցի անմատելի բերդին պատը . մութը երթալով կը թանձրանար հորիզոնին վրայ . կակղիք քաղցրահոտ բուրմանք կը տարածէին օգոյն մէջ , և նոցա տերենոց խօշիւնն , իրեր միմանցնք երեկոյեան աղօթից կը լսուէր : Բուտագովիչ պատմելով չէր կշտանար Հայոց Ա. Նիկոլայոս Եկեղեցւոյն փառաւորութիւնը , նորա ընդարձակ շրջապատ սրահը , և սիւնազարդ մուտքը . կը գովէր Հայոց ճարտարարուեստ և հոյակապ դատարանը , հաստաբեստ կազմի մարդակներով , որոց վրայ հայերէն տառերով փորադրուած էր ժ. Դ. գարու լինելնին : Փոքրիկ Մարգարիտա այլ հարաշիք լսելով , լոիկ մնջիկ նստած երեսները կը կարմրէին ,

աչքերը կը փայլէին . իսկ Ակորսոյ մոտադրութեամբ մտիկ անելով , կը փափաքէր օր մի առաջ երթալ տեսնալ այդ առասպելախաւուն և գեղեցիկ քաղաքը . Ռւտափ օր մի՝ երբ իմացաւ նա՝ որ իւլիով եկած Ա. Երրորդութեան կարգի միանձունք պիտի երթան 'ի կամենից Հայ Ռուս , և Լեհացի գերեալներ յայլագգեաց զնելու և աղատելու համար , մեծ ուրախութիւն զգաց , և հաստատագէս միարաց զրաւ՝ որ անպատճառ ինքն ևս միանձանց ընկերանայ , գերեաց զերեհան լինելու :

Գերեհանաց ընկերութեան երկու անդամն հայ էին , մին գեռ նորդնծայ կրօնաւոր , որ արեելեան վեց բարրառով կը խօսէր , աշխարհական Զաքարիա Միքայէլիչ , որ կամենիցի առաման միջոց փոխադրուած էր յիլվով . սոցագլխաւոր ընկերն էր Տանց Մարի Միքայէլ վարդապետ Սպանիացի : Ակորսոյ սկսաւ աղատել սոցագա՝ որ զինքն ևս իրենց ընկեր առնուն : Այս խնդրոյն համար հարի եղաւ խորհուրդ մի գումարել խոցիմիրաքեայ տան մէջ , ուր հաւանեցաւ գերահան ընկերութիւնն ընդունել զԱկորսոյ իրեն ընկերակից : Տանուաէրը կը պատուիրէր Ակորսոյի՝ որ կամենից համենելուն պէս , երթայ նայի քննէ իւր տունը . խեղճ ծերը չէր զետել՝ որ վաղուց իւր տունն՝ փայտի աեղ՝ կրակի նիւթ եղած էր յայլագգեաց , և եթէ կակղիք այդ փորձանքէն աղատել էին , ուրիշ պատճառաւ չէր , այլ զի կ'ախորժէին նոցա շուքին ներքեած մալապատիկ նստած՝ ժամանակ անցընելու . Բուտագովիչ զանազան առևտարական յանձնարարութիւնք տուաւ Ստեփանի : Հախիսմէ յանձնեց նմա , որ անպատճառ երթայ գանէ նախնեաց գերեզմանքը , և նոցա վրայ մի Հոգրոց ասէ . այլ Մարգարիտայի սիրտը կոտրեցաւ , և աշխարհք հայելու աչք շունէր :

Այս փոքրիկ՝ չորս անձով կազմեալ ընկերութիւնն՝ 1688 յունուարի 15ին , վաղ առաւօտու պատարագ մի տեսնալով , ճամփարդ եղան յիլվովէ 'ի կամենից , կարգէ գուրս ձեռնարկ մի էր սո-

յա սկսածն, որոյ նմանը ոչ ոք չէր յիւ-  
շել: Միանձունք՝ սրտերուն վրայ խաչ,  
զրպաննին ոչ լեցուն, զի միայն 4000  
զլորի ունէին հետերնին, կ'երթային  
առ այլազգին՝ իրենց հաւատակից եղ-  
բարց ազատութիւնը դնելու: Անվտանգ  
հասան հանովա կոչուած տեղը՝ թերե-  
պօվի մօտ, ուստի հարկ էր՝ որ իմաց  
տրուի կամենից փաշային սոցագալըր,  
տեսն և նպատակին մասին: Եանովցի  
մէկը՝ որ միջնորդ պիտի լինէր սոցա և  
փաշային մէջ, ուզեց նիւթ ականատէս  
շահուիլ այս առթովս. առաջարկեց սո-  
ցա որ փողերը իրեն յանձնեն, վասն  
զի «Ճատ վուանգաւոր է ձեզ, կ'ասէր,  
այդշափ փող հետերնիդ, առանց վտան-  
գի կամենից մտնելը»: — և կը խոս-  
տանար ինքն այդ փողերը անձամբ  
բերել և իրենց յանձնել: Այլ զգաստ  
միանձունք այդ շահախնդիրն ծուղա-  
կին մէջ շընկան, և միւս օր՝ առտու  
կանուխ մինչգեռ սրտացաւ խորհրդա-  
տուն՝ ի քուն կը խորդար, կամացուկ  
ելան գնացին ճամբանին: Փետրուարի  
երկութին՝ յետ շատ սրտադող քաշե-  
լու: հասան միանձունք՝ ի կամենից, և  
Ռուսաց կոչուած դոնէն ներս մտան.  
պահապանք քաղաքին՝ արդիւցին նո-  
ցա՝ որ բերդերուն վրայ շատ շնային,  
այլ շուտով անցնին: Գերեալ քրիստո-  
նեայք լսելով միանձանց գալուստը,  
սրտերնին կրահեց, և անպատմելի ու-  
րախութեամբ լցցուեցան: Իսկ պահա-  
պանքն տեսնելով այդպիսի տարօրի-  
նակ երեսյթն, կը զարմանան: « Սորա  
կախարդք պէտք է լինին, կը փսխար  
ամբոխն, դրպաննին լեցուն ստակ, ա-  
ռանց պահապանաց՝ անկարելի բան էր  
քաղաք մտնալը»: Քաղաքին շնկոցը  
հասաւ փաշային ականջը, հրամայեց  
որ բանտարկուին եկաւորներն: այլ  
փաշային մերձաւորներէն մէկը գիտ-  
նալով նոցա նպատակը, խօսք անցուց  
փաշային, ու ինքը մի այլ ուրացոյ ա-  
զայ հետը առած, զնաց միանձանց  
ցուցընելու արդելական գերիները, Երբ  
երեկոյեան գէմ միանձունք մտան գե-  
րեաց մօտ, մորմուքեցաւ տրորեցաւ ողը.

տերնին, տեսնելով նոցա ցաւալի վի-  
ճակը, մանաւանդ երբ կը մտածէին որ  
իրենց քով գտնուած փողը, հազիւ  
զերեաց տասներորդ մասին աղատու-  
թեան փրկանքի կը բաւէր: Գերեվարք  
՚ի սկրան մեծամեծ զիներ կը պահան-  
ջէին: մանկամարդ կնոջ փրկանք՝ փոքր  
երեխայիւ ՚ի միասին՝ 1000 զլորի: աշ-  
խատութեան զալու մնարդուն համար՝  
800 զլորի, ծերու գին՝ 300 զլորի, իսկ  
պառաւի համար՝ աժան, 200 զլորի:  
Այլազգույ մը միջնորդելով՝ կամաց կա-  
մաց գերեվարք պահանջնին ինցուցին.  
այլ միանձանց փողը հազիւ կը բաւէր  
՚ի փրկանս ութ գերեաց: Այլ երբ տե-  
սան այլազգիք որ միանձունք յետ  
գառնալու կը պատրաստուին, աւելի  
ինցուցին գերեաց գինը. սակայն ցա-  
ւալին այն էր՝ որ միանձանց դրամը բո-  
լոր գերեաց ազատութեան էր բաւէր,  
Վերջապէս կրօնաւորը փրկանաւորե-  
լով գերեաց մի մասը, խնդրեցին զե-  
րենքաներէն՝ որ մնացելոց հետ քաղ-  
ցութեամբ վարուին, և խոստացան  
վերստին դառնալ՝ ՚ի կամենից մեծ գու-  
մարով. և ազատած գերեներովն՝ մեկ-  
նեցան՝ ՚ի կամենիցէ վրդովեալ սրտով,  
զի կատարեալ չէր ուրախութիւննին.  
թէպէտ ազատեալ գերեաց վրայ հայե-  
լով՝ մեծապէս կը միիթարուէին, այլ  
մնացելոց նեղ վիճակն կը ճնշէր նոցա  
սիրու. տասնի չափ այլազգի հեծեալ  
զօրականք՝ զմիանձունս, ազատեալ գե-  
րեաց հետ գուրս հանեցին քաղաքէն:  
Սոցա ընկերութենէն մին պակաս էր.  
Ակորսոյ շդարձաւ յիլվով, նա ընտրեց  
գերեհանաց փառքէն աւելի՝ մնալ՝ ՚ի  
կամենից, և ձեռնտու օգնական լինել  
համազգի եղբարց. վասն զի վտան էր  
նա իւր բնական ձրից վրայ, և հաստա-  
տութեամբ միտքը գրած էր՝ տիրողաց  
սիրու շահելով՝ տառապելոց նպաս-  
տամատոց լինել. յորում և յաջողեցաւ:

Ակորսոյի առաջին ջանքն եղաւ Փա-  
շային աքը մտնալ, խոնարհութեամբ և  
ձարտարութեամբ կատարելով նորա  
հրամանները. փաշայն և նորա մերձա-  
ւորք սկսան մասնաւոր ուշադրութիւն

գարձընել այդ ճարտարախօս և աշխացժ պատանւոյն վրայ . շրւտով ստացաւ Փաշային մօտ՝ պաշտօն թարգմանի , և Փաշայն կը յուստոցընէր նմա՝ որ եթէ լաւ վարէ այդ պաշտօնը , կարնոյ արքունի գրան մեծ թարգմանի պաշտօնին հասնելով՝ ամենայն հաւատարութեամբ կը թառայէր , և միջնորդութեամբ առ մեծամեծութօսով և գրամով կը թեթեցընէր գերեցոց դառն վիճակը . այլ ինչպէս առաքինի հոդի՝ կը զգացանար որ շինի թէ յիշ վով կամ այլուր իւր վրայ այլ ընդ այլոյ զրոյցքներ հնարեն նախանձոտ մարդիկ : Շւտսի գրեց առ մի բարեկամն յիշվով հետևեալ համառօտ նամակն , վիոյ և ջատագով իւր ազնիւ սրտին : « Ձիտումն կամ սէր առ ծննդական » տեղիս , ստիպեցին դիս հոս մնալու . « ստացայ պաշտօն 'ի Փաշայէն , այլ ես » իմ ծնողաց հաւատըք ամուր բռնած « եմ , կը ցանկամ միտյն օգնական և » միմիթար իինել՝ 'ի գերութեան հետո ծոյլ եղբարցու :

Միանձունք հասնելով յիշվով՝ կամենիցի քաղաքացիք , հայկազն ծերունիք խոցիմիրսքի և բուտագովիչ՝ զԱկորսոյ նոցա հետ չգտնալով՝ հարցուցին պատճառը . չախորդեցան անփորձ երիտասարդին յանդուգն գործոյն . այլ միանձունք միամիտ արարին զնոսաթէ Ակորսոյ թէպէտ պատանի , այլ մենայն բան հասուն խեթքով կը դորձէր , և թէ նորու նպատակն շաա առաջինական և գովելի էր : Եներունիք հարցմունք հարցմունքի կը յաւելուին . միանձունք քիչ ժամանակի միջնոց ինչ որ տեսած էին և լսած՝ պատմեցին . իւմինցեռ յիշվով՝ հարցափորձութիւնք կը իինէին , Ակորսոյ կամենիցի մէջ ամէն անկիւն կը քաշէր , կը զննէր , և շատ անգամ կը զայրանար և սիրուը կը կոտրէր . զի այն կամենիցը չէր տեսածը , ինչ որ կ'երեակայցէր՝ լսելով երբեմն բուտագովիչ մեծաբան դովեստները : Միայն բերդոյ՝ հասարակաց շինուածոց մէջ . բարեկարդ գտաւ . զի

այլազդիք զայն նորոգելով , քանի մի ամրոցը ևս աւելցուցած էին . մնացեալ ամենայն ինչ աւերակի , դերբուկի երեւոյթ ունէր : Տասն և վեց տարուան մի . նոց անխնամ սալայատակիք շատ տեղ աւրուած էին , չեն ու բազմամարդ գոտին ամսոյի և անմարդի կ'երեւար . լեռաց կոշուած հրապարակին կեղոնը՝ անհեղեղ . կարտաւան-Սարայ մի բարձրացած էր . քրիստոնէից չորս փառաւոր եկեղեցիքն 'ի մզկիթ փոխուած , որոց սեացեալ և ծեփաթափ որմունքն տիրազին տեսկլ կ'ընծայէին . նոցագամ ամսութաց մէջ կը վիստային խոցոտ և բորոտեալ տնանկներ : Փրանկիսկեանց վանքի եկեղեցին , (որ այժմ եպիսկոպոսական եկեղեցի է Ռուսաց) , նոյնպէս Ա . Կատարինէ եկեղեցին , զինուորական կահուց տիբարանոց եղած էին , Յիսուսեանց հոյակապ վանքն՝ ախոռ գարձած , ուր քսանի շափ նիհար ուղարկեր և քանի մի վատոյժ ձիեր կապուած : Հայոց Աւետման և Ա . Նիկոլայ փառաւոր եկեղեցին , աներդիք , անդուն և անպատուհան բաւոց և ջղջկանց բոյն գարձած . պատերուն վրայ և գաւթաց մէջ եղին և այլ մնախոտեր բռնած . միւս երկու փայտաշէն եկեղեցիքն , մին մեծ՝ վերափոխման կուսին , հանդիպակաց Ա . Նիկոլայ եկեղեցւոյն , Հայոց հրապարակին արեմոտեան ծայրը , միւսը Ա . Ստեփանոսի , որ այժմեան Հայոց զանգակատան տեղը կը կարծուի , երկուքն ևս կրակի ճարակ եղած , տեղերնին , հետքերնին անգամ յոյտնի չէր :

Ակորսոյի նշանակուած էր՝ ոչ աղդիս փառաց , այլ թշրւառութեան և տառապանաց ականատես լինել և վըկոյ . գեռ ևս փոքրիկ տզայ , գողցես հրաշուղ ազատած հայրենի ծածքին կրակին միջէն , այժմ ևս ոչ առաւել միխթարական վիճակի մէջ կը դանէր իւր ծննդեան քաղաքը : Խնչպէս ազգիս շինութեանց աւերակները՝ նոյնպէս փնտուց գտաւնա՝ աղջիս փշրանք կամ խեցերանք քանի մի հայ ընտանիք . նորքա ևս հարստահարեալ և աղքատ վի-

ճակի մէջ, Շատ անդամ պատահեցաւ նմա մոնել Հայոց գատասառնին մէջ, ուր աշքին ծայրով կը խուզէր գտնալ մնացորդ ինչ հայրեննեաց : Նա իրեւ թարգման՝ բան առ բան այլազգեաց քատրին ականջը կը հեղուր, դատեւրց զրուցածները, իրաւոնքները. ձեռքէն բան չէր գար, կամ խիստ քիչ բան կու գար պաշտպանելու իւր համազգիքը : Այն մեծ Հայոց հրապարակըն, որոյ վրայ շինուած էր այդ դատարանն, որոյ երբեմն Հայոց առևտուրն և գործունեայ կեանքը մեծ շինութիւն և կենդանութիւն կու տային, խուլ և վայրենի փողոցի տեսիլ ունէր : Նորամեռնելութիւնը երբեմն կը կենդանացընէին կեղտոտո որդիին խրայելի, և այլ երբեմն խեղճ քրիստոնեայ կալանառք, գորս յատեան հարցափորձի կը քաշէն չառուշներն :

Այս զրից մէջ մնաց կամենից 27 տարի մինչև ց1699 : Ակորսոց տասը տարի ականատես եղաւ այդ սրուամաշ տեսարանին, այլ նորա ազնուական հոգին առաւել ընտրեց կալ մնուշ հոն և վշտակից լինել ազգիս տառապանաց, քան իվլովի մէջ հանգիստ կեանք վարել : Վարձատրեցին երկնք նորա առաքինութիւնքը . քիչ ժամանակէն պիտի տեսնենք զնա, սոյն այս աղետաւոր կամենիցի մէջ երշանկացեալ կինօք և զուարժ, և բոլոր քաղաքը պիտի օրէնէ զնա լիաբերան :

1699ին կամենից նորէն լեհաց անցաւ, և ի 18 սեպտեմբերին սոյն տարին, աստ և անդ ցիր և ցան կամենիցցիք մեծաւ ուրսխութեամբ գարձան իրենց ծննդեան տեղին : Սոցա առաջնորդ և պարագլուխն էր Մարտինոս Պոկուչ (Պողոսովիչ) ծերունի հայ գօրավարն, սոցա հետ էր Հայոց Միքայէլ վարդապետը, որ իւր ծոցը կը կրէր երկու Հայ աղնուականաց կտակները, որք կամենիցի կարօտով, յօտարութեան մէջ

թողել էին սսկորնին, Խոցիմիրսքի և Բուաագովիչ :

Սոցամէ առաջինն՝ սեփական տունը՝ կամենից շրջապատ գետնովը՝ կը թողուր Ս. Երրորդութեան կարգի կրօնաւորաց, յորմէ էր և ինքն Միքայէլ վարդապետ . այս պայմանով որ իւր ձեռասունկ կազդի ծառոց խնամ տարուի, վասն զի այլազգիք ևս խնայել, միանդամայն միրել էին նոցա հովանին : Մարգարիտէ իւր միակ դստեր կը թողուր իվլովի տունը և այլ ամենայն շարժական ստացուածք: Բուտագովիչ ծերունին ևս, որոյ նոյնպէս խոստովահայր եղած էր Միքայէլ վարդապետ, նոյն կարգին համար նոր շինուելու վանքին կը թողուր 500 զլորի : Այս ծերունի հայազգին՝ մեծ փափագունէր վերստին տեսնել Սմնթրիչ գետոյն միջավայր կզգիացեալ կամենիցը: և մահուան անկողնոյն մէջ յիշած էր Փոտովիոյ պայծառ արելը :

Բաց ՚ի Պողոսովիչ և Միքայէլ վարդապետէ, նշանաւոր են Հայոց խմբին մէջ երեք այլ երիցունք՝ Ալյանովիչ, Բարուքովիչ և Պոկտանովիչ: Առաջին երկուքն Ս. Նիկոլայ եղբայրութեան հոգաբարձուք եղած են, և նոցա յանձնուած է կամենից մսնենուն պէս՝ նայիլ պատրաստել Տիրամօր հրաշագործ պատկերին՝ պաշտպանի ազգիս՝ վայելուչ և պատշաճաւոր տեղի . յետինս՝ Պոկտանովիչ մանր զրած է այլազգեաց ՚ի կամենից երբը և մեծահանդէս կերպով եկեղեցեաց վերստին սրբումը :

Հայոց ՚ի կամենից վերադարձող խմբին մէջ, առանձին ջոկ մի կը կազմէին կանայք, որոց վերակացուք էին չորս մայրապետք, այլ շատ բարեպաշտ ոյրիք, սիկնայք, և ազնիւ օրիորդք, ՚ի թիւս որոց՝ մեղ արդէն ծանօթ խոցիմիրափի հայազգւոյն զստրիկն՝ Մարգարիտէ, հասակակից և ընտանի Ակորսոյ Ստեփանիկ հայ պատանւոյն :

1 Խոցիմիրսքի հայկազնոյն տան աելը կայ այժմ գեղեցկաշէն ենէնկեցի ՚ի պատիւ Ամենասուրը Երբորդութեան, և նորա ձեռասունկ

կակչեք ցարդ կու սփռեն իրենց մեծասարած շուքը այդ եկեղեցւոյն և նորա շրջակայ բնակութեանց վրայ:

Սա իր ազնուական ծնողացմէ տուացել էր ժառանգութիւն ոչ միայն նիւթական բարիք և ստացուածք, այլ և ազնուական սէր հայրենեաց և ազգին, այն աստիճանի՝ որ հաստատապէս միտքը դրած էր, որ եթէ օր մի արժանի լինի սուրբ պատկի, մի հայ երիտասարդի հետ, անպատճառ կամենիցի Հայոց եկեղեցեաց միոյն մէջ կատարուի այդ խորհուրդն իւր վրայ և կամենից հասնելուն պէս՝ օրիորդին առաջին սրբազն գործն եղաւ՝ փնտուել գտնալ իւր սիրելի ծնողաց տան տեղը, և նրա տեղով հայրատունկ կակլեաց հովանուոյն ներքն, ձեռն՝ ի ծնոտի՝ լալ քաղցրիկ մօրը անդառնալի կորուստը, որ զինքն՝ ի լցոյ ընծայելով փակել էր աշքերը օտարութեան մէջ, գետի պէս կը յորդէին արտասուք նորա նաշխուն աչքերէն, առաքինազարդ ծերունի հօր յիշատակը, որ զինքն անծայր սիրով կը սիրէր, միակ, որք և անտէր, հսցենի տան գերբիկին վրայ կը տեսնար ինք զինքը, նա չէր գիտել՝ որ նոյն մինչոցին՝ երբ ինք զինք իրբն թէ գերբուկին քարերէն մին, չէնքէ դուրս մնացած՝ անտէր և անոք կը կարծէր, երկնաւոր որբոց և այրեաց խնամու Հայրն, իրեն տէր և ապագայ կը պատրաստէր,

Փաշան պիտի մեկնէր կամենիցէ . Ստեփանիկնորամէ իւր հրաժարականն առնելով՝ գնաց զիմաւորելու եկաւոր կամ վերադառն եղբարբը : Ամէնքն մեծ և փոքր, քահանաց և աշխարհական, սիրով կը թօթուէին այդ առաքինի երիտասարդին ձեռքը, ամէնքն պատիւ կը սեպէին իրենց նորա հետ խօսակցիլը . անմիջապէս Միքայէլ վորդապետին մօտէն կը դառնար Ստեփանիկ, երբ նորա աչքին զարկաւ ախրագինն Մարգարիտէ, որյ սրտին յուզմունքն և թափած արցուէնքներն՝ նոր գեղ, նոր շնորհը կու սփակէին նորա գեղեցիկ և պարկեցաւ կերպարանաց վրայ . — «Այդ դու Մարգարիտէ», հարցական ձեռվ բացագանչեց Ստեփանիկ: Մարգարիտէ տեսաւ իւր զեմոց կանգնած փառաւոր երիտասարդ

մի, ծանօթ կերպարանքով, այլ տասը տարուան միջոց մեծապէս փոխուած, այրական մեծամեծ պեխելը որած, կտրիճ նայուածքով, վայելլաղէմ և վոյելլակազմ, երեսը արեակէզ, գլուխը վայելու կարմիր ֆէս, որոյ ծովը ետի կողմէն կ'երերար, թէպէտ և դա այն վայելլադէմ պատանեակն էր, որոյ հետ շատ տարի հայրենի ծածքին տակ անմեծութեամբ խաղացել էին, այլ որչափ փոփոխութիւն . Սակայն և այնպէս Մարգարիտայի սիրութ կռահեց, հազիւ կարողացաւ Ստեփանէ... անունը արտարերել, ծունկըն երերացին, կապուեցան շրթունքը, արդէն սիրութ, յուղեալ էր: Այլ մեք թողովի առայժմ՝ այդ սրտագին տեսարանը՝ մըտնենք կամենիցի մայր եկեղեցին: Փայմանադիրը ստորագրուած էր, որոյ գօրութեամբ այլազգիք վերստին կեհաց թողով կամենից քաղաքը՝ հարկ էր որ հեռանային . յետին անգամ ժողոված հին փառաշշէն մայր եկեղեցւոյն մէջ, զըր՝ ի մզկիթ փոխած էին, կատարեցին իրենց նամազը, յետոյ անգուխներով դէպ՝ ի կաթուղիէն վեր ելան մոլլանները, որ իշեցընեն հոն կախուած սրբազն գրօշակը: Երբոր հասաւ զրօշակը՝ վարը սփռած կերպարին վրայ, այնպիսի գոռում և գոչում վերուցին, որոյ նմանը շատ քիչ անգամ պէտք է լսուած լինի աշխարհիս վրայ: Ամանք զգեստնին կը պատոէին, երեսի վրայ յերկիր կը կործանէին, մինչդեռ այլք պատկառանոք համբուրելով գրօշակը կ'ամփոփէին կերպասին մէջ, և տիսուր եղանակաւ երգելով՝ կը հեռանային տաճարէն:

Այնդին՝ քիչ հեռուն կեհաց զօրքն կազմ՝ և պատրաստ կանգնած էին, որոյ ի գլուխ ալեւոր հին զօրավարն Պօկուշ, վար առնելով գլուխն ցցունազարդ սաղաւարութ, կնքեց զինքը նշանաւ Սիամակին, և ապա ծերունոյն Սիմէսնի խօսքը կրինեց: «Այդ արձակեա զծառայս քո, Տէր» :

Այս ամենայն կատարուեցաւ սեպտ. 22ին, երեքշաբաթի: Այս դէպէս հինդ

օր վերջը, այն է 27 սեպտ. 1699, առաւօտեան խուռն բազմութիւն ժողովցան ոյս եկեղեցւոյս մէջ, զրեաթէ քողոր կամենիցի Հայկազունք և այլ ազգեր: Միքայէլ վարդապետ սրտաշարժ քարոզ մի խոսեցաւ հաւատացելոց, որոյ աւարտման միջոց պարկեցաւ թեամբ մօտեցան բեմին զցոք մի, որոնք արդէն իրենց առաքինութեամբ բազմութեան համակրութիւնը զրաւածէին: Միքայէլ վարդապետ՝ աւետարանին խօսերով պասակեց և անլուծանելի կապով կապեց զնոսա: Համարէն ժողովորդ Հայք և օտարք լիասիրա մազթեցին նոր պասակելոց երջանկութիւն և բաղդ և շատ երկայն արև: Փեսայն մեղ ծանօթ Ակորսոյ հայ պատահին էր, որ կ'առնուր Խոցիմիրպիի միակ գուտարը Մարգարիտէ: Հարսնեառունն եղաւ Հայոց գատարանն, զոր հապճեպով պատրաստեցին, փոխանակ աթուններու երկայն երկայն նստարանները կապերտ, ներով և զորգերով յարդարելով: շատ էին հարսնեղբն, ամեննեցուն երեսին վրայ գոհութեան զուարթութիւն: շատ մազթողլական բաժակներ պարպուեցան յերջանկութիւն հայ պսակելոց: գողգոծւն ձայներով հայ պառաներ, յորդորաբար հայերէն օրհնութիւններ կը հեղուին պսակելոց զիմին: «Երկայն արե լինին, ծին ծաղկին, իրենց թոռներուն պասակները պագննն»: Եւ յիրաւի, հասած է նոցա լիարերան օրհնութիւնն: զի Ակորսոյ կամ Ակորսովիչ ցեղը բազմածնունդ և երկար անուանի եղած է լինահայոց մէջ:

Պսակելոց արձանագրութեան մէջ, յետ գաղթականաց գարձին, առաջին տեղ կը բռնէ Ակորսոյի պսակման արձանագրութիւնն: Խոցիմիրպեսոյ տընկած կակլիք՝ առիթ եղան ինձ ուշադրութիւն գարձնելու այս դէպքիս, որոնք անբարբառ վկայք երկու հարիւր տարի է որ կանգնած իրենց տեղը՝ եթէ լեզու ունենային՝ կարելի է ևս այսոր նման շատ դէպքեր ալ կը հաղորդէին, յանցեալ գնացեալ կամենիցի Հայկազանց նկատմամբ:

Թ

Քիեւ, եւ անտի դարձ 'ի թէոդոսիա:

Կամենիցի մէջ 12 օր շրջելէն վերջը՝ անկենդան, անցած, մարած Հոյութեան հրաժարականս տալսվ, և յանձն լինելով Հրաշագործ Տիրամօրս Հայոց, ճամբայ ելայ դէպ 'ի գիեւ՝ սեպտ. 1ին: Կառօք 90 վերսա հարկ էր գնալ մինչեւ ցիրուքուրով. այլ ո՞չչափ տարրերութիւն քիչ օրուտն մէջ. մէգ, մառախուղ, ցեխ. առկայն և այնպէս՝ երկրորդ կէս օրը հասոց զմեզ կառավարըն ֆրուքուրովի հանգոյցին երկաթուղոյն. ուստի և շուտով մեկնեցայ շոգեկառօք, և սեպտեմբերի երեքին՝ կէս օրը հասոց 'ի գիեւ: Կայարանին տափաձե բարձրաւանդակին վրայ կանգ առնըլով կ'արժէ հայեաց մի տալ այդ Փոքր Ռուսաց մայրաքաղաքին վրայ, որ յիշաւի ակնապարար և մողական երեցիթիմն կ'ընծայէ. բլրոց վրայ է քաղաքն, բուսականութիւնը ճոխ, սրով կանաչութեան մէջ ընկղմած կ'երեխ. վայելշածե և նախշուն զանգակատունք գեղցիկ կերպով աստի և անտի՝ ի վեր կ'ամբառնան. քաղաքին լսոյն և գարովար սալյասակներն՝ օձաձե կ'երեան, և այլ վիթխարի շնչերն իրը 'ի մանրանկարի կը պատկերանան: ձըշմարտապէս վիթխարի ասելու կ'արժէ մեծ և լայնանիսա համալսարանն իւր պարտիզաւ, որ ամբով թաղ մի է: Համալսարանիս շնչերն մէջն է երից արևմտեան թուսիոյ գաւառաց, այսինքն է գիեւի, փոտոլիոյ և վոլնի: Հնութեանց զիւանն, յորում կը պահուին Հայոց կամենիցեան մուգիստրատին գործերը՝ 104 տարրուան միջոցի, այն է 1560-1664, միածալ, կաշեկազմն, ինակիով գրուած՝ 32 հատ կոճ հատորներ. սակայն որչափ կազմին և զրութեան ձևոյն հոդ տարած են գրողը, կարծես նոյնչափ և աւելի ևս՝ անփայթ եղած են լեզուին մաքրութեան. զի այդ գրուածքն անհնարին խառնուրդ մի են

երեք լեզուաց՝ Հայու, Թաթարի և լեռ.  
Հիւ Առաջին երկու հատորին՝ աղաւազ  
հայ լեզուավ գրած են. 1593էն կը սկսի  
Թաթար լեզուն, խառն հայ և լեռ բա-  
ռերով, սակայն միշտ հայ կովիկ նօսրա-  
դրով. 1625էն ամբած է այդ գրուա-  
ծոց մէջ լեռ լեզուն: Քիեւի մէջ մետա-  
սաներորդ գարէն սկսեալ՝ հարկաւ շատ  
հայ գաղթականներ բնակած են, այլ  
այժմ այնպէս բնաջինջ եղած են՝ որ և  
ոչ անգամ հետքերնին կ'երևի. քաղա-  
քին հին փուռով կոչուած թապին Ս. Նե-  
կոլայ եկեղեցւոյն համար ինձ զրուցե-  
ցին, թէ հինէն Հայոց մնացած շէնք է.  
այլ ես գիտելով՝ հայութեան ոչ մի  
նշալ չգտայ: Կան Քիեւի մէջ քանի մի  
հայ ընտանիք՝ սոքա վերին ատեններս  
՚ի Ղրիմէ՝ առևտորով հոն անցած են:

Քիեւ հին քաղաք է և առհասարակ  
Ռուսաց լուսաւորութեան ե-  
ղած է իւր հին ակադեմիայի: շատ  
անգամ մերթ լեհաց և մերթ Ռուսաց  
ձեռք անցած: Վերջին ժամանակներս  
մասնաւոր ինամբ եղած է քաղաքին  
բարեկարգութեան վրայ. Քրէլլարիք  
կոչուած՝ ընդարձակ և փառաշէն փո-  
ղոցն՝ Եւրոպայի որ և իցէ քաղաքին  
զարդ կարող է լինելու. Փառաւոր է և  
մեծ Վլադիմիր փողացն. ունի Քիեւ հա-  
րուսաւ և ճուխ եկեղեցիք՝ վերուստ՝ ի  
փայր արծաթի խաչկալք. Նշանաւոր  
են յայսմ մասին՝ քաղաքէն դուրս բեր-  
դին մէջ Լաւրայի վանքի եկեղեցիք,  
այլ արուեստ և ճարտարապետական  
ճաշակ կը պակասի սոցա:

Տներեր գետոյն եղերբք բարձրաբերձ  
նորաշէն եկեղեցին՝ Հռչակեալ յանուն  
Նախակոչ Անդրէի առողբելց, իւր գեղե-  
ցիկ և շքեղ իտալական ճարտարապե-  
տութեան արուեստին և նկարուք՝ Եւ-  
րոպացի տաճարացմէ վար չի մնար: Հե-  
տաքննելի են քաղաքէն գուրս զետնա-  
փոր դամբաններու մէջ ամփոփուած  
սրբոց տապանք, ուր Բուսաստունի ա-  
մէն կողմէն ուխտաւորք կը յաճախեն.  
Նշանաւորք են այդ նշանարաց մէջ Ռու-

սաց նեստոր և Պիմիչն ժամանակադրաց  
նշանարքն՝ Ընդարձակ է բարձրագիր  
լեհաց եկեղեցին, այլ ներսի կողմէն  
անշուք, մասնաւանդ աւագ խորանն,  
համեմատութեամբ կամենիցի եկեղե-  
ցեաց:

Սեպտ. 9ին ճեպընթացիկ շոգեկառաք  
ելայ ՚ի ճանապարհ ունակ յօտեսսա:  
Քիեւի և Խիրսոնի նահանգաց հացա-  
շատ գաշաերն այնանային տարազու  
մէջ էին. հունձք ժողոված, աստ և անդ  
յարդի և խոսոյ մեծամեծ ղէզեր, ան-  
տառք և պարտէնք կիսամերկը, մնա-  
ցեալ կարմիր և գեղին տերեններն կը  
սպասէին ցուրտ պախրցոյն՝ որ ազատէ  
զիբենք երերուն վիճակէն: Հասայ յօ-  
տեսսա սեպտ. 4ին, ուր քանի մօր  
մեալով, ամսոյն 17ին կանուխ առաւօ-  
տը հասայ շոգենաւով, երբեմն հայու-  
թեամբ նշանաւոր հաֆայ, այժմ թէու  
դոսիա: Ի վաղուց փափաքերի ճանա-  
պարհորդութիւնս՝ ամսուան մէջ կա-  
տարեցաւ. ցնորդ և երեակայութիւնք  
աղիտաւոր իրականութեան մի դիմաց  
պարզեցան և ցրուեցան. Հարկ է ինձ,  
Առաքել պատմին հետ, մեր կամենից-  
ցի եղբարց մասին ասել. « Եղեն վոա-  
» բանդեազք և տարամերթեազք յերկիր  
» ոստար և յազգ այլասեռ և այլալեզու  
» ... և անդէն օր աւուր՝ առ սակաւ  
» սակաւ նուազին մահուամբ և կորըս-  
» տեամբ ։ Ասուսած ամուր պահէ  
այլ տեղաւանք մնացեալները Անեցւոց  
մի ամբողջ մասն, քսան հաղարի շափ  
ժողովուրդ, հաւատարիմ իրենց նախ-  
նեաց աւանդութեան, հայախօս և հա-  
յուծէս Գօն գետոյն եղերաց վրայ կը  
գեգերի, մեծաւ մասամբ կեդրոնացած  
Հայահնչիւն Նոր-Նուխիթիւնան քաղաքին  
մէջ: Բաղրամիափիս յետագայ պրակաց  
մէջ այդ քաղաքին և իւր ժողովրդիւնն  
իմ վրայ գործած տպաւորութիւնը,  
յայսմ (1884 մայիս) ամի, ճանապար-  
հորդութեանս միջոց՝ յուսամ հաւա-  
տարմաբար ՚ի լցոս նշանաւորք: